ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿԵՐՊԱՐՎԵՍ ԵՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, պատասխանների ձևաթուղթը: Առաջադրանքների նյութի համար որպես հիմք են ընդունվել «Արվեստի պատմություն և տեսություն», «Կոմպոզիցիա» և «Գունատեսություն» առարկաների արվեստի քոլեջների հանրակրթական ծրագրերը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք (40 հարց՝ հայ և համաշխարհային արվեստի պատմություն, 20 հարց՝ կոմպոզիցիա և գունատեսություն), որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր: Բովանդակային առումով թեստում առկա են «Հայ և համաշխարհային արվեստի պատմություն» առարկայի հանրակրթական քոլեջների ծրագրի բոլոր բաժինները.

- Ընդհանուր տեղեկություններ հայ և համաշխարհային արվեստի պատմության մասին,
- Նախնադարյան արվեստ, Բրոնզեդարյան արվեստ,
- Հին աշխարհի արվեստ՝ Հայաստան, Եգիպտոս, Բաբելոն, Հին Հունաստան,
- Միջնադարյան հայ արվեստ՝ մանրանկարչություն, որմնանկարչություն, ճարտարապետություն, քանդակագործություն,
- Միջնադարյան եվրոպական արվեստ՝ Հռոմ, Բյուզանդիա, գոթական արվեստ,
- Հայ եկեղեցական ճարտարապետություն և խաչքարեր,
- Իտալական Վերածնունդ, ճարտարապետություն, քանդկագործություն,
- Իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ, ֆովիզմ, պուանտելիզմ, կուբիզմ, ավանգարդ,

- Հայկական կերպարվեստը 18-19 դդ, Հովնաթանյաններ,

Հայն կերպարվեստը 20-րդ դարի սկզբից՝ մինչև 21-րդ դարի սկիզբը, (Գրիգոր Խանջյան, Մարտիրոս Սարյան, Էդուարդ Իսաբեկյան, Հակոբ Կոջոյան, Եվանդ Քոչար, Արտաշես Հովսեփյան և այլն),

- Կոմպոզիցիայի հիմունքներ և գունատեսության,

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Կառուցվածքային առումով թեստում ներառված են ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից պետք է ընտրել մեկը: Ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Աղասյան, Արվեստի պատմություն. Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Գիրք 1, Երևան, Արմավ, 2020:
2. Ա. Աղասյան, Արվեստի պատմություն. Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Գիրք 2, Երևան, Արմավ, 2022:
3. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան, Զանգակ-97, 2009:
4. Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները 19-20-րդ դարերում, Երևան, Ոսկան Երևանցի, 2009:
5. https://www.slideshare.net/karenmkrtchyan/ss-6801735

6. "Искусство цвета" (Иоханнес Иттен)
7. Г.М. Логвиненко - ДЕКОРАТИВНАЯ КОМПОЗИЦИЯ
8. Ольга Леонидовна Голубева "Основы композиции', Учебное пособие
9. Степанов А.В., Мальгин В.И., Иванов Г.И., др., Объемнопространственная композиция, М., Издательство Архитектура-С, 2007г
10. Устин В.Б. Учебник дизайна, Композиция, методика, практика, М., АСТ, 256 с., 2009 г.